



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ Հ.Յ.Դ. Կ. ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱԿՑԵՑԱԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԺՄՈՒ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՇՈՒՐՁ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 4 Սեպտեմբերի յետմիջօրէին, Ազգային Առաջնորդարանի յարկին տակ ընդունեց այցելութիւնը Հ.Յ.Դաշնակցութեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական կոմիտէի անդամներէն Տեառք Ժան Գոսաքեանն ու Յարութ Մանուկեանը, որոնք եկած էին մեր ժողովուրդն ու հայրենիքը յուզող հարցերու մասին խորհրդակցութիւն ունենալու Առաջնորդ Սրբազանին հետ:

Յարգելի ներկայացուցիչները ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ հաղորդեցին նորագոյն այն զարգացումներուն մասին, որոնք սկիզբ առած էին Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ համաձայնութեան մասին տեղեկութիւններով: Այս մասին տեղի ունեցան տեղեկութեանց ու տեսակետներու փոխանակում: Առաջնորդ Սրբազանն ու հիւր ներկայացուցիչները ընդգծեցին, որ Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ որեւէ համաձայնութիւն պէտք չէ անտեսէ մեր ժողովուրդին իրաւունքներն ու արդարութեան նախադրեալները: Այս ծիրին մէջ, նաեւ համախոհողութիւն արձանագրուեցաւ ճիգերը ներդաշնակելու եւ միացնելու համար:

### **PRELATE AND ARF CENTRAL COMMITTEE MEMBERS DISCUSS RECENT DEVELOPMENTS IN ARMENIA**

On the afternoon of Friday, September 4<sup>th</sup>, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed members of the ARF Central Committee Mr. John Kossakian and Mr. Harout Manoukian to the Prelacy, where a discussion took place on the recent developments in Armenia.

The guests gave a general overview of the recent goings-on in Armenia with regards to dialogue between Armenia and Turkey, followed by an exchange of thoughts on this matter. The Prelate and guests stressed that no agreement between the two countries should compromise the rights of the Armenian people and reaffirmed their coordinated efforts towards this cause.